Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

2017 թվականի դեկտեմբերի 10-ից 11-ը ք. Մոսկվա գործուղման վերաբերյալ

- **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

  Ծովինար Գալստյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

  ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի փոստի վարչության պետ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

  Ռուսաստանի Դաշնության՝ քաղաք Մոսկվա, 2017թ. դեկտեմբերի 10-ից 11-ը:

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

  Կապի տարածաշրջանային համագործակցության գործադիր կոմիտե

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

  Մասնակցություն Կապի տարածաշրջանային համագործակցության (ԿՏՀ) փոստային հանձնաժողովի շրջանակներում ստեղծված Համաշխարհային փոստային միության հետ իրականացվող աշխատանքների գծով Աշխատանքային խմբի 1-ին նիստի աշխատանքներին:

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

  2017թ. դեկտեմբերի 11-ին կայացած ԿՏՀ-ի Համաշխարհային փոստային միության հետ իրականացվող աշխատանքների գծով Աշխատանքային խմբի 1-ին նիստի ընթացքում քննարկվեցին վերը նշված աշխատանքային խմբի ղեկավար պաշտոններում ԿՏՀ-ի Կապի վարչակազմերի կողմից առաջադրված թեկնածությունների վերաբերյալ առաջարկությունները: Արդյունքում, ԿՏՀ-ի Համաշխարհային փոստային միության հետ իրականացվող աշխատանքների գծով Աշխատանքային խմբի նախագահի պաշտոնում ընտրվեց Ուզբեկստանի

Հանրապետության տեղեկատվական տեխնոլոգիաների և հաղորդակցության զարգացման նախարարության ներկայացուցիչը:

Նիստի ընթացքում քննարկվեցին նաև ԿՏՀ-ի կապի վարչակազմերի կողմից՝ 2018թ. սեպտեմբերի 2-7-ը ք. Ադիս-Աբեբայում (Էֆիոպիա) կայանալիք Համաշխարհային փոստային միության արտահերթ վեհաժողովի նախապատրաստմանն առնչվող մի շարք հարցեր: Մասնավորպես կապված Միության բարեփոխումներին, պրոդուկտների ինտեգրման պլանին և անդամ-պետությունների անդամավճարներին:

Աշխատանքային խմբի կողմից որոշվեց մինչև 2018թ հունիսի 1-ը մշակել Համաշխարհային փոստային միության արտահերթ վեհաժողովի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ ԿՏՀ-ի կապի վարչակազմերի ընդհանուր դիրքորոշման նախագիծը:

Նիստի ընթացքում Ռուսաստանի Դաշնության և Ղազախստանի Հանրապետության ներկայացուցիչները ներկայացրեցին 2017թ. հոկտեմբերի 16-27-ը Բեռն քաղաքում կայացած Համաշխարհային փոստային միության Ադմինիստրատիվ խորհրդի և Փոստային շահագործման խորհրդի նստաշրջանի ընթացքում Հանձնաժողովների և Աշխատանքային խմբերի ընդունած որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը:

Ներկայացվեց նաև 2018թ. ընթացքում Հեռահաղորդակցության միջազգային միության, Համաշխարհային փոստային միության և ԿՏՀ-ի կողմից նախատեսվող միջոցառումների ցանկը:

Նիստի ընթացքում առաջարկվեց Աշխատանքային խմբի 2-րդ նիստը անցկացնել 2018թ. հուլիս-օգոստոս ամիսներին՝ ԿՏՀ-ի փոստային հանձնաժողովի և փոստային կապի օպերատորների խորհրդի նիստերի հետ համատեղ:

Կից ներկայացնում եմ օրակարգը, որոշումների նախագծերը և մասնակիցների ցանկը:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Աշխատակազմի փոստի վարչության պետ **Ծ.Գալստյան**

13.12.2017թ.